



Հաստատված է
 ԳԴՀ գիտական խորհրդի 2007թ.
 մայիսի 5-ի թիվ 4 նիստում
 Ռեկտոր՝ *Բ. Բաբայան* Ռ. Խ. Հակոբյան
 «05» մայիսի 2007թ.

ԳՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՂԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ, ՀԱՄԱՏԵՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԺԱՄԱՎՃԱՐԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

ԿԱՐԳ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը, հիմք ընդունելով Գավառի պետական համալսարանի կանոնադրությունը, սահմանում է պայմանագրային, համատեղության և ժամավճարային կարգով դասախոսներին աշխատանքի ընդունման ընթացակարգը, սկզբունքներն ու պայմանները:
2. Պայմանագրային, համատեղության և ժամավճարային կարգով աշխատանքի կարող է ընդունվել «Գավառի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման և խրախուսման» կանոնակարգով նախատեսված պրոֆեսորադասախոսական բոլոր տարակարգերին համապատասխանող, ինչպես նաև այդ տարակարգերին ներկայացվող պահանջներին բավարարող անձը:

**II. ՂԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ, ՀԱՄԱՏԵՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԺԱՄԱՎՃԱՐԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ
 ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

3. Պայմանագրային, համատեղության և ժամավճարային կարգով աշխատանքի ընդունելու հավակնորդներին (այսուհետ՝ հավակնորդ) ներկայացնում է ամբիոնը՝ թափուր ժամերի առկայության դեպքում:
4. Հավակնորդի աշխատանքի ընդունելու հարցը քննարկվում է ամբիոնի նիստում: Արձանագրության քաղվածքը համապատասխան հիմնավորումով և հավակնորդի՝ սույն կարգով սահմանված պարտադիր փաստաթղթերով ներկայացվում են Համալսարանի ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտորին:
5. Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտորը փաստաթղթերի փաթեթը ուսումնասիրելուց հետո ռեկտորատի քննարկմանն է ներկայացնում հավակնորդի թեկնածությունը:
6. Ռեկտորատի դրական որոշման դեպքում հավակնորդը դիմում է գրում Համալսարանի ռեկտորի անունով և աշխատանքային պայմանագիր է կնքում տվյալ ուսումնական տարում Համալսարանում դասավանդելու համար:

III. ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ, ՀԱՄԱՏԵՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԺԱՄԱԿՃԱՐԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

IV. Պրոֆեսորի պաշտոնում աշխատանքի հավակնորդը, որպես կանոն, պետք է ունենա

համապատասխան մասնագիտության դոկտորի գիտական աստիճան և (կամ) պրոֆեսորի գիտական կոչում:

V. Դոցենտի պաշտոնում աշխատանքի հավակնորդը, որպես կանոն, պետք է ունենա համապատասխան մասնագիտության գծով գիտական աստիճան և (կամ) դոցենտի գիտական կոչում:

VI. Ասիստենտի պաշտոնում աշխատանքի հավակնորդը, որպես կանոն, պետք է ունենա բուհական աշխատանքի առնվազն հինգ տարվա ստաժ և (կամ) համապատասխան մասնագիտության գծով ավարտած լինի ասպիրանտուրա՝ հանձնելով թեկնածուական որակավորման քննությունները:

VII. Դասախոսի պաշտոնում աշխատանքի հավակնորդը պետք է ունենա դիպլոմավորված մասնագետի կամ համապատասխան մասնագիտության գծով մագիստրոսի որակավորման աստիճան:

VIII. Դասախոսի պաշտոնում աշխատանքի ընդունվելու պարտադիր պայման է գերազանցության դիպլոմի առկայությունը կամ մասնագիտական առարկաներից գերազանց և լավ (լավ գնահատականների նվազագույն քանակով) առաջադիմությունը:

IX. Հավակնորդը դիմումին կից պարտադիր ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը.

- 1) անձնական թերթիկ՝ լուսանկարով,
- 2) անձնագրի պատճենը,
- 3) սոցիալական քարտի պատճենը,
- 4) 4 լուսանկար (3x4 չափսի),
- 5) աշխատանքային գրքույկի քաղվածքը,
- 6) ինքնակենսագրությունը,
- 7) գիտական աշխատությունների ցանկը,
- 8) վավերացված դիպլոմի պատճենը,
- 9) վավերացված դիպլոմի միջուկի պատճենը,
- 10) վավերացված գիտական աստիճանը հաստատող փաստաթղթի պատճենը,
- 11) վավերացված գիտական կոչումը հաստատող փաստաթղթի պատճենը: